

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ

Սօֆիան Գերասիմովնա ՄԵԼԻԻՔ-ՔԵՂԱՆԻՍԻԱՆ, իշխանուհի Նինա Գերասիմովնա ԱՆԿՐՈՆԻԿՈՎԱ, Մարիա Գերասիմովնա ԿԱՐԱՆՎԱՆ և Լուսինա Զամբար Զամբարովնա ՄԵԼԻԻՔ-ՔԵՂԱՆԻՍԻԱՆ, սրտի ցաւով հաղորդելով առաջինները իրանց եղբոր, իսկ վերջինը իր աներորդու ՄԻԿԱՅԷԼ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ԱՂԱՄՁԱՆՈՎԻ մահւան մասին, (որը վախճանվել է Ս. Պետրբուրգում անցեալ օգոստոս ամսի 29-ին), խնդրում են աղակաւաններին և ծանօթներին յարգել հանգուցեալի յիշատակը և շնորհ բերել հոգեհանգստին, որը տեղի է ունենալու Վաղրի մայր-եկեղեցում, վաղը, կիրակի օրը, սեպտեմբերի 15-ին, ցերեկվայ ժամը 12-ին:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ
Հայոց թատրոն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Լամակ խմբագրին. — Լամակ խմբագրին. — Ներքին լուրեր. — ՍԵՍԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Բեզիան իւր կուսի գլուխ. — Արտաքին լուրեր. — ԽԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԿԻՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ՔԱՆԱԿԱՆԱՆ. — Ֆրանսիական հանրապետութեան խաղաղութիւնը.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Նորից գոյութիւն ունի մեր քաղաքում Հայոց թատրոնը: Այժմ յարմար ժամանակ է թատրոնի գործը անկեղծ կերպով սիրող մամուլի համար իր կարծիքն արտայայտելու, ուղղութիւն տալու գործին, որպէս զի նա նորից չընկնի այն սխալներին մէջ, որոնք և եղան անցեալներում նրա կորստեան պատճառը:

Սխալները հետեւեալներն էին. 1) Անաշուղ բեմերուտար, 2) Անշափ թանգ տեղեր, 3) Չափից դուրս շաւլ ծախսեր, 4) Աւելի զանախ ներկայացումներ, քան պահանջ կար հասարակութեան մէջ:

Քննենք մի առ մի չորս կէտերը:

Առաջին՝ չէ կարելի կերպով ժողովուրդը անմիտ, անբովանդակ, անսպասակ մեղադրանքներով, որոնք ամեն բան կայ բացի մտքից՝ և թոյն, և սպանութիւն, և անմիտ սիրահարութիւններ, և սպանված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ֆրանսիական ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՉԱՓԱՀԱՍՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ ֆրանսիայում այս օրերս տօնվել մի արտադրութեամբ: Ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը այս սեպտեմբերի 4-ին քսան և մի տարին լրացրեց և չափահաս դառաւ:

1870 թվի յուլիսի 15-ին Նապոլէօն III-ը յանպատասխան Պրուսիային պատերազմ յայտնեց:

Արտաքին գործերի նախարար դը-Գրամոն գոռում էր ամբոյնի վրայից, թէ ամեն ինչ նախատեսված է: Չինուորական նախարար Լըբոնֆը անստիպար հաւատացնում էր, թէ մենք պատրաստ ենք, շերտը անգամ պատրաստ ենք: Կառավարութիւնը յայտարարում էր, թէ ոչ մի կօծակ չէ պակսում մեր զինուորներին կոշիկներին: Ինքնաբերական հաւատացնում էր իր լրագրի մէջ, թէ մենք պրուսացիներին հրացանի կոթով կը ջարդենք և իր յափշտակութեան մէջ, այս անմիտ բացազանցութիւնն էր արձակում:

— A Berlin! (դէպի Բեռլին):

Եւ ամբողջ, հաւասար ապագայ անկասկածելի կարծած յաղթութեանը, խմբերով շրջում էր Պարիզի փողոցները. «A Berlin, à Berlin» կրկնելով Այս մի յափշտակութիւն էր, մի վարակելի ոգեւորութիւն, որը զրգուում էր մահապարտ կառավարութիւնը և որը անկարող եղան սանձել:

կամ մեռած մարդկանց քան անգամ յաւուրութիւն առնելը և գլխատումներ և այլն և այլն... Կամ պէտք է լաւ ոյժեր ունենալ ճշմարիտ դրամատիկական, ողբերգական թէ ժամանակակից և թէ կյանքական պիէսներ ներկայացնելու համար, կամ այդ տեսակ պիէսներ ներկայացնելու համար ոյժեր չունենալու պատճառով չը պէտք է կերակրել ժողովուրդը կեղծ դրամաներով և եւրոպական բոլոր բեմերից արդէն վաղուց հանած թէ ժամանակակից և թէ պատմական անմիտ մեղադրանքներով: Կարելի է խաղալ Շէկսպիրի, Շիլլերի, Գիւնայի, Ֆելդերի, Միլերի պիէսները, — բայց պէտք է նրանց ներկայացնելու համար ընտիր ոյժեր ունենալ, պէտք է այդ պիէսները լաւ խաղալ եթէ ոչ նրանք միայն ծիծաղելի կը լինեն: Իսկ եթէ չէք կարող օրինաւոր կերպով ներկայացնել այդ պիէսները, — աւելի լաւ է տալ մեզ ծիծաղալար իօնի դիաներ և փողովիներ... Գոնէ մարդը կուշտ կը ծիծաղէ, ինչպէս ծիծաղեցինք այս հինգշաբթի օրը, ներկայ դանկելով «Գոն-Գրեզորի» և «Գոնպարօնի» պիէսները: Ներկայացմանը ջը մուտանք, որ ինքն մարդկային կեանքը այժմ դառնում է այնքան բարդ, բաղադրեալ, ինքն ըստ ինքեան այնքան լի է առօրեայ այլ և այլ դարձերով ու ցաւերով, որ մարդիկ թատրոն դնալով՝ պահանջ ունեն եթէ ոչ զուտաշունար, զոնէ հոգեպէս հանգստանալ և մի րօպէ գոնէ մոռանալ առօրեայ ցաւերը: Իսկ երբ ժամանակակից քաղաքակրթութիւնը

Տիեզերի նման խորհող ազգասէրները:

Մեծ աղմուկով սկսեցին կենտրոնացնել Ֆրանսիական զօրքերը Պրուսական սահմանի վրա. նրանք բաժանվել էին հինգ զօրաբաժինների, որոնց հրամանատարութիւնը յանձնվեց Մակ-Մահոնին, Բադենին, Կանթորբերին, դը-Ֆայրին և Ֆրուսսարին: Գնենրալ Լըբոնֆ կարգից բարձրագոյն կառավարիչ, իսկ «փոքր Նապոլէօնը» (ինչպէս կոչում է Վիկտոր-Հիւգօն Նապոլէօն III-ին) գլխավոր հրամանատար:

Պատերազմը յայտնված էր, պրուսական ահռելի զօրութիւնն արդէն անցել էր սահմանը, երբ յանկարծ անկրեւ եղաւ երեք բան.

1) Որ ֆրանսիան մի միլիօն զերմանական զօրքն կարող է միայն երեք հարիւր հազար թերաւարժ զինուորներով դիմադրել:

2) Որ զօրքին ամեն ինչ պակասում էր և շատ բաներ չէին նախապատրաստած, — սկսած թնդանքներից և վառօդից մինչև պաշարը:

3) Որ ֆրանսիական գնդապետները մի աննկրելի և աղետալի սխալ գործեցին՝ զինուորական զօրքերին հէնց սկզբին, — իրանց զօրութիւնը մանրելով և 30—40 հազարից բաղկացած գոյներ տիրելով սահմանի ահագին տարածութեան վրա: Այն ինչ թշնամին կենտրոնացնում էր իր գոյները և տեղաված ոյժով անդադար առաջ էր ընթանում, մեր նուսրացած խմբերը խորտակելով:

Այս սխալներն էին, որ կործանեցին ֆրանսիան: Նապոլէօն կայրան և նրա կառավարութիւնը մի սարսափելի ոճի էին դարձել և հայրենիքն ակներև կորուստի էին մատնել:

Մեր պարտութիւնների լուրը աղաւաղվում

կեանքից տանջված մարդը ուզում է թատրոնի բեմից ընդունել ճշմարիտ խիստ և խոր հոգեկան տպաւորութիւններ, — հաւատացէք, որ նրա զգացմունքները, նրա ջգային սխտեմը այն աստիճան նրբացել են, որ նա չի գնայ այդ տեսակ տպաւորութիւններն ընդունելու մեր ազգային նահապետական բեմից, այլ կը սպասէ մինչև որ դայ մի առաջնակարգ գեղարուեստագետ, ինչպէս որ երաժշտութիւնից խոր տպաւորութիւն, ճշմարիտ հոգեկան վալսերութիւն ստանալու համար մարդ չի գնայ սիրողների կօնցերտներում պիանօի վրա ածողներին լսելու, այլ կը սպասէ, մինչև որ բարեհաճէն գալ մեզ մօտ Բուբինշտեյնի, Բեյզլեյնի, Չեզլիի, Մէնտելի պէս առաջնակարգ ածողներ...:

Երբ որ դէ չը պէտք է տեղերի դնելը չափից դուրս թանգ նշանակել, այլ պէտք է, որքան հնար է, պակասեցնել այդ դնելը, որպէս զի թատրոնը պահանջ դառնայ հասարակութեան, ժողովրդի մեծամասնութեան համար, պահանջ դառնայ հայ ընտանիքի համար, և ոչ թէ միայն ինտելիգենցիայի մի շատ նեղ շրջանի համար: Պէտք է այնպէս անել, որ մի և նոյն պիէսա հերթով կարողանան տեսնել քաղաքի զրկեթ բոլոր բնակիչները, և ոչ թէ որ մի և նոյն հինգ հարիւր մարդուց բաղկացած մի նեղ շրջան ստիպված լինի բոլոր ներկայացումները յաճախել:

Երբ որ դէ չը պէտք է անել չափից դուրս շաւլ ծախսեր և մի քանի ամսվայ ընթացքում վառելիք թատրոնական ամբողջ գումարը, պահելով մի ահագին խումբ և արտիստներից իւրաքանչիւրին տալով հրէշաւոր ուժիկներ, կամ փողովի թատրոնի կառուցանողի ջգը ու, դժոխային նախանձից զրկված և նրան անպատճառ վնասել ցանկանալով, չը պէտք է անցնել մի այլ դահլիճ՝ վճարելով իւրաքանչիւր երեկոյեան համար հարիւրներ...:

Չորս օր դէ չը պէտք է մոռանալ, որ հայոց առհասարակ, նոր է սկսում պահանջ զգալ դէպի որ և է մոռաւոր կեանք և դեռ ևս իր համար անհրաժեշտ սնունդ չէ համարում մոտաւոր սնունդը: Եթէ լրա-

գիրը դեռ ևս անհրաժեշտ պահանջ չէ դարձել հայի համար, լրագիր, որը տարեկան 10 ռուբլի արժէ, ուրեմն ամսական 1 ռուբլուց պակաս, և դարձեալ ընթերցող հայը աշխատում է կամ չը վճարել բաժանորդագիրը, կամ նոյն իսկ իր հարեանից վերցնել թերթը և ձրի կարգաւ ուր մնայ որ նոյն հայը, այն էլ գուցէ ընտանիքով շաբաթ երեք անգամ թատրոն յաճախելով իւրաքանչիւր անգամ վճարէ առնուազն 2 ռուբլի, որն ամսական անում է 24 ռուբլի, իսկ տասն ամսվայ մէջ՝ 240 ռուբլի... Ուրեմն առ այժմ կատարելապէս բաւական է եթէ ներկայացումները լինեն ոչ աւելի, քան շաբաթ մի անգամ:

Թող այժմեան հայոց թատրոնական մասնագէտը զեկականները լաւ մտածեն այդ չորս էական կէտերի մասին, որպէս զի դարձեալ չը կրկնեն այն սխալները, որ անցնելու քանի մի տարի առաջ թատրոնական գործին դուրս կանգնած նրա կեղծաւոր բարեկամները, որոնք այս րօպէս, երբ իրանք ամեն բան սպանեցին, ձեզ հետ խօսելիս իրանց շրթունքներից մեղր են կախեցնում, կրօնգիտական արտասուքներ թափելով աս ու վախ են քաշում հայոց հասարակութեան անտարբերութեան մասին, իսկ մի ժամանակ, քանի մի ամսվայ ընթացքում իրանք սպանեցին նոյն թատրոնական գործը՝ ամեն բան զոհելով իրանց անձնական հաճոյքին, հրէշաւոր նախանձի և տխմար փառասիրութեան զգացմունքին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐԻՆ

Թիֆլիս, 14 սեպտ.

Ձեր «Մշակ» լրագրի № 102-ի մէջ կարդացի իմ նամակի պատասխանը, դարձեալ Ականատես ստորագրութեամբ: Պ. Ականատեսի այս վերջին գրութեան մէջ լուսաբանելու արժանի մի կէտ կայ, այն է՝ 150 ռուբլի տալու պատճառը վանքի աւագ եկեղեցու միաբանութեանը. մնացած

«Ֆրանսիացիները:

«Մի մեծ անբաղդութիւն հարուածում է հայրենիքը:

«Երեք օրվայ հերոսական կուրից յետոյ, որը մարշալ Մակ-Մահոնի զօրքը վարեց 300 հազար թշնամու դէմ, 40 հազար զօրք զերկեցաւ:

«Գնենրալ Վիպպեն, որը հրամանատար էր նշանակված, Մակ-Մահոնի ծանր վիրաւորվելու պատճառով, անձնատուր եղաւ:

«Անողորմ արկածը չէ խախտում մեր ոյժը:

«Պարիզ այսօր պատրաստ է պաշտպանվելու:

«Երկրի զինուորական ոյժերը կազմակերպվում են:

«Մի քանի օրից յետոյ մի նոր զօրք կը կանգնի Պարիզի պարսպի տակ, մի ուրիշ զօրախումբ կազմվում է Լուարի ափերին:

«Չորս հայրենասիրութիւնը, ձեր միտքիւնը, ձեր տոկոսութիւնը կը փրկեն ֆրանսիան:

«Կայսրը կուզէ միջոցնել զերի ընկաւ:

«Ամբողջ քաղաքն էր: Ահա ինչ վրձնակի հասցրեց միապետութիւնը թշուառ ֆրանսիային:

«Կայսրը գերի տարած ! Գահը խորտակված ! Մեծ Նապոլէօնի յաջորդը պրուսական թագաւորին իր տոհմական սուրը և 80 հազար հողի յանձնած և, ինչպէս երևում է ափշտակից, գերմանական անդիմադրելի զօրութիւնը Պարիզի վրա մղած:

«Փոքր Նապոլէօնի դաճը սրով և արիւնով էր հատաւորված, սրով և արիւնով էր խորտակվեց... Գառնութեան բաժակը լցվել էր !

«Պարիզի ամբողջ րօպէական ապստամբից սթափված, իր որդուն յայտնեց:

կէտերի մասին պատասխանը, եթէ նա ուշադրութեամբ կրկին կարդայ, կարող է գտնել իմ նախկին նամակի մէջ, որը տպագրվեց «Մշակ» լրագրի № 101-ի մէջ:

1876 թվից մինչև 1880 թիւը, ես որպէս անժողովուրդ քահանայ, հովուում էի Կոջօր ամառանոց գնացող հայ ժողովուրդին և գոյացած բոլոր արդիւնքները բացառապէս ստանում էի ես: Բայց երբ իմ նախորդը—Վանքի առաջ եկեղեցու Յովհաննէս առաջ քահանայն—հանդես էր Տէր, ինձ, որպէս նրա օգնականի, յանձնվեց նրա ծովը, որով ես դարձայ ծխատէր քահանայ և Վանքի միաբան, հետեւեալը և պարտաւորվեցայ այդ օրից կատարել իմ միաբանական պարտաւորութիւնները Վանքի եկեղեցու: Հոգևոր իշխանութիւնը այդ թվին Կոջօրի հայոց եկեղեցին միացրեց Վանքի առաջ եկեղեցու հետ և կարգադրեց, որ Վանքի եկեղեցու միաբանները հերթով հովուեն և արդիւնքը միաբանութեամբ ստանան: Այդ կարգադրութիւնից յետոյ Վանքի եկեղեցում միաբանական ժողով եղաւ և որոշվեց, որ միաբաններին ու զնայ Կոջօր, նա մի հարիւր յիսուս ըլլալի պէտք է տայ միաբանութեանը տեղական բոլոր արդիւնքներից, որոնց գումարը հասնում է միջին թուով 300 ռուբլու: Իսկ մնացեալ 150 ռուբլին պէտք է գործադրվի երգեցիկ խմբի պահպանութեան, սննդի և Կոջօրի գնալ ու վերադառնալու ծախսի համար: Իսկ որպէս վարձատրութիւն, եթէ հարկ տեսնի տեղական քահանայն, որովհետեւ այդ թողված է նրա կամքին,—կարելի է տալ միայն գանձանակ: Միաբանութեան այս կարգադրութիւնից յետոյ, այն է՝ 1890 թվին հերթը եղելէ քահանայ Տէր-Գրիգորեանինն էր: Նա ինչ ինչ պատճառներով չը կամեցաւ գնալ, ես գնացի նրա տեղը: Ներկայ 1891 թվին հերթը պատկանում էր Գեորգի քահանայ Գալստիանին: Սա ես որպէս կոնսիստորիայի անդամ և գանձապահ, չը կարողացաւ գնալ. դարձեալ ես գնացի և իւրաքանչիւր տարի միաբանութեան որոշման համաձայն տուեցի 150-ական ռուբլի: Եկող տարի իմ հերթն է, ես պէտք է գնամ և որոշման համաձայն դարձեալ պէտք է տամ միաբանութեանը 150 ռուբլի: Յետագայ տարին Գիւտ քահանայ Աղանեանինն է հերթը. եթէ նա գնայ, դարձեալ 150 ռուբլի պէտք է տայ միաբանութեանը և այլն: Ուրեմն պ. Ալեանտեանը թող իմանայ, թէ ինչու է արվում հարիւր յիսուս ռուբլին և որ այդ գումարը ոչ թէ միայն ես եմ տալիս և տալու եմ միաբանութեանը, որ իբր թէ ինձ թողնեն Կոջօր գնալու, ինչպէս նա ասում է, այլ դա միաբանական ժողովի որոշումն է: Ինչպէս որ միաբան քահանայն էլ գնայ, նմանապէս պէտք է տայ միաբանութեանը այդ գումարը տեղական եկամուտներից:

«Կորչի միապետութիւնը, կեցողէ հանրապետութիւնը»: Մի ժամից յետոյ յեղափոխութիւնը կատարված էր: Ժողովուրդը Բուրժուական պալատի պատշգամբի վրայից յայտարարեց աշխարհի ֆրանսիական երրորդ հանրապետութեան ծնունդը:

Այս մեծ յեղափոխութիւնը կատարվեց առանց մի կաթիլ արիւնի,—այնքան հմուտ էր այս մեծ աղբը յեղափոխութիւններ անելու և այնչափ հասունացած էր նա հասարակապետութեան համար:

Մի և նոյն օրը կայսերական զորակները վերցվեցան և նրանց տեղը հանրապետական եւ ազգայն զորակները ծածանվեցան, կայսրուհի Ելզբէթիան փախաւ, ժամանակաւոր հանրապետական կառավարութիւնը կազմվեց «ազգային պաշտպանութեան կառավարութիւն» կոչումով և մի նոր յուսարից արև ծագեց թշուառ հայրենիքի վրա:

Կառավարութիւնը բաղկացած էր այն ժամանակվայ առաջնակարգ ազատականներից, որոնց անունները պէտք է յիշատակել:

Արաքս էին. Գալստիստ, Ժ. Սիմոն, Ժ. Ֆալլը, Ժ. Ֆերրի, Արաքո, Կրեմիս, Գորիա, Գարնիէ-Պաժէս և միւսներ:

Գնահատ Տրօչին կարգվեց Պարիզի քաղաքապետ և պաշտպանողական զօրքերի հրամանատար:

Այս նորակազմ կառավարութեան առաջին պրոկլամացիան.

«Հրաժարեցինք մինչեւ պատգամաւորների պալատը տառապնում էր, ժողովուրդը պահանջ

գալով պ. Ալեանտեանի այն խօսքերին, թէ «թող տէր հայրը նախ վարձատրէ պ. Վարդիկեանին և նրամեանին, ուրիշ ասելու բան չունենալ»: Եւ պարտնի այդ խոսքերը և անկանոն պահանջը նմանեցնում եմ մի տեսակ պնդման մարդկանց արարքներին, որոնք մտնելով աների բակերի մէջ, երկար կանգնում են և աղմուկ հանելով՝ զօռով ուղղում—կամենում են, որ անպատճառ նրանց բան տան—վարձատրեն:

Յարգել խմբագիր, խնդրեմ այս իմ նամակին, որ վերջինն է լինելու այս հարցի մասին, տեղ չհորհրէք ձեր «Մշակ» լրագրում:

Կոջօրի հայոց եկեղեցու՝ Նիքիլ քահանայ Նիքիկեան:

ՆԱՄԱԿ ԽՈՍՏԱԳԻՆ

Թիֆլիս, 10 սեպտեմբերի
Կարգավոր պատական «Մշակ» № 101-ի մէջ տէր Նիքիլ Նիքիկեանի նամակը, որը պատասխանում է Ալեանտեանին, նամակի երկրորդ մասում գտաւ ինձ վերաբերեալ գրած սխալ լուրեր:

Տէր Նիքիլ գրում է, որ ինքն ոչինչ չէ խոստացել պ. Երամեանին, այլ տարել է Կոջօր միայն գանձանակի վարձատրութեան յուսով: Ընդհակառակը, ինձ տէր հայրը ոչ թէ միայն խոստացել է վարձատրել, այլ մինչև անգամ խօսք ասած չէր գանձանակի վարձատրութեան մասին: Նա ուղղակի ինձ ասեց՝ պատրաստվիր գնալու Կոջօր: Իսկ ինքն երկրորդ օրը գնաց Թէլաւ, որտեղ մնաց մինչև 30 յուլիս: Իսկ մենք գնացինք յուլիսի 15-ին Կոջօր, որտեղ ես և իմ ընկեր պ. Վարդիկեան մնում էինք եկեղեցական սենեակներում: Ի հարկէ, ինչպէս ամեն տարի միշտ տէր հօրից ստացել ենք սեզօնի վերջը մի որոշ վարձատրութիւն, այնպէս էլ այս տարի սպասում էինք ստանալու: Երբ սեզօնի վերջն եկաւ, տէր հայրը մեզ յայտնեց, որ մեզ ոչինչ չի տալ, որովհետեւ մեզ հետ չէ պայմանաւորվել: Ուղիղ է մենք ոչինչ պայմանաւորվել չունենք գրած, բայց մենք համոզված էինք, որ, ինչպէս ամեն տարի, առանց պայմանաւորվել գրելու, ստացել էինք մի որոշ գումար, նոյնպէս կըստանայինք և այս տարի մի որոշ գումար: Այդ իրողութեան մասին կարող է վկայել Վանքի առաջ քահանայ Խարաղեան, երբ հերթը հասաւ իւրան Կոջօրում լինելու 1889 թվի սեզօնի վերջը, մենք առանց պայմանագրութեան ստացանք վարձատրութիւն: Երկրորդ տէր Նիքիլը պատասխանում է Ալեանտեանին, թէ երկուսն էլ՝ պ. Վարդիկեան և պ. Երամեան, այս տարի չեն վարել ծանր պաշտօն. նա վկայ է բերում բարեկարգչին: Սակայն նոյն իսկ հայր բարեկարգչից կարող է վկայել, որ տէր Նիքիլի արարմունքը անիրաւացի

չեց հանրապետութիւն, որ փրկէ վտանգի ենթարկված հայրենիքը: Քաղաքացիներ, հակեցէք այս քաղաքի վրա, որը ձեզ է հաւատացած. վաղը, զօրքի հետ միասին, դուք հայրենիքի վրէժը կառնեք...»:

Այս մեծ եղելութիւնը կատարվեց 1870 թվի սեպտեմբերի 4-ին:

Այսօր Պարիզի ամենաքեղ փողոցներից մէկը կրում է այս պանծալի անունը. «Սեպտեմբերի 4-ի փողոց»:

Պարիզը պաշարվեց: Պրուսական զօրքերի ահաւել շղթան օրից օր աւելի և աւելի սեղմվում էր և թշնամու թնդանութիւնը գոռում էին արդէն Պարիզի չըջկայ բարձրութիւններից:

Պարիզ կղզեացած էր մնացած Ֆրանսիայից, ամեն տեսակ յարաբերութիւն դաւառների հետ կտրված էր. հանրապետական կառավարութիւնը ճանաչված չէր ոչ միայն օտար պետութիւններից, այլ նոյն իսկ Ֆրանսիական դաւառներից: Մի հերոս էր հարկաւոր, որի կրծքում մի անընկճելի ազգասէր սիրտ բարձրել, որը իր անձն վտանգի ենթարկելով, իր ուղեւորիչ և յափշտակող խօսքով դաւառները ոտի կանգնեցէր: Այս մեծ փառքը Գամբետային էր վիճակված: Մայրաքաղաքից դուրս գալու միակ միջոցն էր՝ օդապարիկ նստել: Գամբետտան չը վարանեց և թշնամու բանակի վրայով թռաւ նա զէպի դաւառ և ձեռք զարկեց նոր զորաբաժնի կազմակերպութեան: Այս նոր—լուարի զօրքը, որի վրա պարիզցիք իրանց ամբողջ յոյսն էին դրել, պիտի դարձնայ մայրաքաղաքը պաշարող թշնամուց թափե-

է: Տէր-Նիքիլի իբրև մեղադրանք բարդում է մեղ վրա, թէ մենք չէինք մասնակցում առաւօտեան և երկուցեան ժամերին: Նախ՝ ճշգրտելու պաշտպանելու համար ասում եմ, որ տէր հօր ժամասացութիւնը դեռ բոլորովին անկանոն էր մինչև յուլիսի 15-ը. ժողովուրդը դժգոհութիւն էր յայտնում, որ քահանայ չը կար, և նոյն իսկ պ. Ոստիկանապետը կամենում էր հեռագրով յայտնել կոնսիստորիային, որ կամ տէր Նիքիլը գայ, կամ առհասարակ մի օր և է քահանայ: Տէր Նիքիլի գրած նամակի երրորդ մասն էլ բոլորովին սխալ է. մենք մեր մէջ ընտրած ունէինք մի հասակաւոր և երկու փոքր երգչիներ, որոնք հասարակ օրերը լինում էին տէր հօր հետ եկեղեցում, իսկ շաբաթ երեկոյան և կիրակի օրերը ամբողջ խումբն էր երգում: Զրպարտութիւն է, որ իբր թէ մենք առաւօտեան քնած էինք, իսկ երեկոյան պրոստում էինք:

Տէր հայրը իր գրած նամակով արեւաբացել է ուղում իրան, սակայն աւելի լաւ կը լինէր չը զրպարտէր և մեզ հասանելի փողերն ուղարկէր:

Ստեփաննոս Երամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յայտարարութիւնների շատութեան պատճառով «Մշակ» այսօրվայ համարը հրատարակում ենք վեց երեսից բաղկացած:

Հինգաթիւ, 12-ին սեպտեմբերի, մի ախորժիկ երեկոյ անցկացրինք ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում: Հայոց թատրոնական խումբը խաղում էր «Դօն-Գրիգորի» թէև անբովանդակ, բայց վերին աստիճանի սրամիտ և ծիծաղալարժ պիէսան և «Բօնպարզօնի պանդուխտ» վերնագրով նմանապէս ծիծաղալարժ փոքրվեր: Ներկայացման հերոսներ՝ Թուրան և Տէր-Գալստեան անուն կոմիկներն էին, որոնք այն երեկոյ ամբողջ հասարակութեան համակրութիւնը գրաւեցին: Գեղեցիկ արկին Մէլքեան շատ հրապուրչի էր: Զիւլալի դերում: Վրոյրը գիտէ իրան մեծ արժանաւորութեամբ պահել բեմի վրա, ունի բեմական ձայն, լաւ դիկցիա և կիրթ ձևեր: Ամբողջութիւնը վատ չէր: «Կատերինա Հովարդ» պիէսալից յետոյ հանգստացանք և ճշմարիտ գեղեցիկ երեկոյ անցկացրինք: Թատրոնը գրեթէ լի էր: Միւս հինգաթիւ, 19-ին սեպտեմբերի, կը ներկայացվի Դիւմայի «Կամիլիոնադադ արկին» յայտնի պիէսան: Որիորդ Սիրանուշին և երկամասրը պ. Խիւքեանին տուած են զլիաւոր դերերը:

Ստացանք «Սլեյքեր» և «Տարազ» հանդէսների, հրատարակութիւն № 53, Յուր. Ղարաբեղեանից, «Կնոջ կոչումը» և գրութիւնը հասարակութեան

լու: Միւս կողմից ահաւել Մէքը քաջ Բաղդի հրամանատարութեան ներքոյ պաշտպանվում էր 200 հազար թշնամի զօրքի զէն: Աւելացնենք մի Պարիզ հօր պաշտպանողական դերը էր բերում և կառավարութիւնը զինաւորում էր քաղաքի բոլոր տղամարդկներին—մօտ կէս միլիօն զօրք... Սեպտեմբերի 20-ին կառավարութիւնը հետեւեալ պրոկլամացիան էր հրատարակում.

«Լուր է տարածվել, իբր թէ ազգային պաշտպանութեան կառավարութիւնը մտադիր է ձեռք բաշխել այն քաղաքականութիւնից, որի պահպանութեան համար նա յանձն է առել պատիւ և կորուստ:

«Մեր քաղաքականութիւնը ձևակերպվում է այսպէս.

«Ոչ մի մատ մեր հողից, ոչ մի քար մեր բերդից: Կառավարութիւնը կը պահի իր խոստումն մինչև վերջ»:

Զուր յոյսեր, որոնք միայն ճգնաժամն էին հեռացնում...

Հոկտեմբերի 2-ին, յիսուսեայ հերոսական պաշտպանողութիւնից յետոյ, Ստրասբուրգ և Տուլ ընկան:

Այս նոր ծանուցումն էլ չը յուսահատեցրեց Ֆրանսիան: Ժողովուրդը միշտ մի մեծ շարժման էր սպասում գնեւեալ Տրօչի կողմից, որը պիտի փչեր պաշարող շղթան:

Իդուր...

Օգոստոսի 31-ին Մէքի անձնատուր լինելու գոյժ տարածվեց: Բաղէն մատնել էր իր հայրենիքը...

Այն ժամանակ առաջին խռովութիւնները

մէջ: Այդ փոքրիկ բրօշիւրը, որը տպված է Թիֆլիսում, Տ. Նազարեանից տպարանում, ներկայ 1891 թվին, բաղկացած է 31 երեսից և արժէ 10 կօպէկ: Պ. Ղարաբեղեանից ջանք է արել ծանօթացնել ընթերցողին քաղաքակիրթ աշխարհի այլ և այլ երկրներին կանանց հասարակական այժմեան վիճակի հետ: Իր գրութեան վերջում, որը մի տեսակ թոյլ կօմպլիմենտ է, հեղինակը խօսում է և հայ կնոջ հասարակական դերի մասին, սկսած գիւղական շրջանի հայ կնոջ մինչև մեր բարձր հասարակութեանը պատկանող հայտնու դիրքը: Նա այն միտքն է յայտնում որ մեր հասարակութեան ստորին և միջին դասակարգին պատկանող կանանց մէջ աւելի են պահպանվել ինքնուրոյն բնաւորութիւնը, պարկեշտութիւնը, սէրը դէպի մայրենի լեզուն, աշխատասէր բուն հայկական ոգին և այլն, քան թէ մեր հասարակութեան բարձր դասակարգին պատկանող կանանց մէջ: Նիւթը հետաքրքիր է և գրեթէ լաւ է կարդացվում, թէև ամբողջ գրութեան մէջ չը կայ մօթի խորութիւն, չը կայ մի օր և է նոր միտք, ամբողջ գրութեան բացակայ է խոր դիտողութիւն և ինքնուրոյն հետազոտիչ ոգի: Իհրոն շատ անմշակ է, անկանոն, անհարթ է և լեզբականական հակասող ձևերով, ինչպէս մի բրօշիւրների մեծ մասի լեզուն, որոնց հրատարակողները մեծ մասամբ իրանք անպատրաստ գրողներն են, որ երբէք չեն տալ իրանց լեզուն մի հմուտ մարդուն խմբագրելու: Բրօշիւրի լեզուի ուղղագրութիւնը դարձեալ այն անճշտնի նորահար ուղղագրութիւնն է, որ ընդունել են Աղայեանց, Արասխանեանց և Տիգրան Նազարեանց:

«Մշակ» անցեալ № 102-որդ համարում ներգրաւուած պ. Բրիտիսի կօնցէրի լեզուն մի քանի մէջ մի տպագրական սխալ է մտել: Տպված է «նրա ջուրով forte-ի ժամանակ տարօրինակ, նոյն իսկ շվացող կերպով է գոռում»: Շվացող բառի տեղ պէտք է լինէր՝ շվացող:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼԳԻԱՆ ԻՐԲ ԿՈՒՒ ԴԱՇՏ

Բելգիական մամուլը նորից սկսել է դադարել այն հարցով թէ, կոչված է արդեօք Բելգիան ծառայելու Եւրոպային իր կուռ դաշտը Մարդ կարող է ճառել այս հարցի մասին և ցոյց տալ իր խորին գիտութիւնը, բայց կը գիտարանայ գտնել պատմութեան մէջ կէտեր, որոնք բաւական նմանութիւն ունենան այժմեանի հետ, որպէս զի անցեալով կարելի լինի լուսաբանել յայտնվեցան կառավարութեան անգործունէութեան պատճառով, որով նա կէս միլիօն զօրք փակել էր ամրութիւններում և մի վճռողական քայլ չէր անում: Մի քիչ յետոյ այս խռովութիւնները պիտի փոխվեն մի դարձուրդի տեղ թորի, որը պատմութիւնը արձանագրեց արեւմտաւերով: Սա կօմպլիւն էր:

Չմարային անսովոր ցրտերը վրա հասան. հող սկսում էր պակասել, միւս միջոցները ապաւիլ էին, վաղուց էր, որ ձիւ և ուրիշ կենդանիներ միս են ուտում, բայց քաղաքը չէ յուսահատվում և սպասում է միշտ դաւառների օգնութեանը:

Դեկտեմբերի 27-ի գիշերը առաջին առաւել եւա քաղաքի մէջ և առաւօտեան մի քաղաքի բարբարոսական ակտ կատարվեց.—Պարիզի ամբողջութիւնը սկսվեց:

«Նա կը մտնէ Պարիզ, ասել էր գոռող կոմի Բիւմարի Ժիւլ Ֆալլը, եթէ մինչև անգամ հարկ լինէր նրա կէտը մոխրը դարձնել: Դեկտեմբերի 28-ին կոմը իրաւորում էր իր սպանալովը...»

Ռուսները խորտակում էին հասարակական և մասնաւոր շէնքերը: Խաղաղ ժողովուրդը չէր կարողանում դուրս գալ իր տնից...

Ճգնաժամը հասել էր: Սովը սաստկանում էր: Պաշարման 105-րորդ օրը մի հնդուհաւ ծախվում էր 128 ֆրանկով (40 ռուբլի), մի ձու մօտ 2 ռ., իւրի ֆունտը 13 ռ., մի կաղամբը 3 ռ. մի զագարը—30 կօպ...

Այս դրութեան մէջ ժողովուրդը դեռ յոյսը չէր կորել նահանգներից և իր պաշտպանողական մօտ կէս միլիօն զօրքից:

բանց կանանց և երեխաներին լուծենք ուղարկելու նորից դիտարկութիւն ունեն քաջութեամբ յետ մղել թիւրքերին և ժամ առ ժամ յարձակմանն են սպասում: Սակայն կարծում են, որ յարձակումը տեղի չի ունենայ, որովհետեւ դա պատճառ կը դառնար ընդհանուր ապստամբութեան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական պօստի փոխօգնական զորքը, իր առաջնորդ Ֆրէդերիկ Հարիսոնի ղեկավարութեամբ, այս օրերս իր կարծիքը յայտնեց քաղաքական հաւասարութեանը ձգտող անգլիական տիկիներին և օրիորդներին դէմ: Օգիտա կոնտի մահական տարեգրքի առիթով, Հարիսոն մի րէֆերատ կարդաց, որի մէջ խիստ կերպով պատահական է կանանց ձգտումը՝ ձեռք բերել ներքոր-ծական և չէղջը ընտրողական իրաւունքներ: Հարիսոն մատնացրց է անում այն բանի վրայ, որ կինը բոլորովին ուրիշ կերպ է կազմված, քան տղամարդը, և որ նա կատարելապէս ուրիշ կոչում ունի: Նա չէ կարող միաժամանակ և տղամարդ լինել, և կին, նա չէ կարող պետական վարչութեանը մասնակցել և մի և նոյն ժամանակ կատարել մանուկներ կրթելու և ընտանիքը կառավարելու ոչ պակաս ազնիւ միտքներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱՍԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 սեպտեմբերի: Երէկ, կէս-

րին, Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գեորգիեւնա-յի դրութիւնը անսպասելի կերպով դէպի վատը փոխվեց: Երեկոյեան 11 ժամին Օգոստապոլսո-հիւանդի դրութիւնը մի փոքր թեթեւացաւ, բայց թուրութիւնը սաստկացաւ:

ՄՕՍԿՎԱ, 11 սեպտեմբերի: Գիշերուայ ընթացքում Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գեորգիեւնա երեք անգամ համիմատարար թոյլ ցնցումներ ունեցաւ: Իւրաքանչիւր ցնցումը երկուսից մինչև 4 րոպէ էր տևում, թուրութիւնը չը սաստկացաւ, կերակրի կու տալը դժնայուցիւ է, ուշի դեռ չէ եկել, վտանգը դեռ չէ անցել:

ՊԱՐԻԶ, 11 սեպտեմբերի: Լրագիրները կարծիք են յայտնում, որ անցադրային կանոնների վերացումը Էլզա-Լոտարինգիայում Եւրոպայի վրա լաւ ազդեցութիւն կը գործի: «Republique Francaise» լրագրի կարծիքով, այդ միջոցը, Էլզաբետեան ճառից յետոյ, ապացուցանում է, որ Վիլհելմ II, լսելով իրան գաղապարաւոր Եւրոպայի ձայնը, հրաժարվեց իր ճառից:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 սեպտեմբերի: «Нов. Время» լրագիրը հայտնում է, որ այս օրերս պետական խորհուրդին են առաջարկվելու հրեական հարցի վերաբերյալ խորհրդակցութիւնների արդիւնքները, որոնք անցելու տարի կատարվում էին ներքին գործերի մինիստրի օգնական Պլեյզերի նախագահութեամբ:

ԼՕՆԻՕՆ, 12 սեպտեմբերի: Անգլիական լրագիրները հայտնում են «New York-Herald» լրագրի Շանիայից ստացված հեռագրից երևում է, որ

գործերի դրութիւնը Զինատանում գնալով վատանում է. խառնակութիւնները Իշխանուհի գործընտրում են, ապստամբութիւնը տարածվեց Եան-ցղէ-Կիանդի ամբողջ հովտի վրա. Նանիսու և Շիկինգ պատրաստվում են ապստամբվելու: Այդ բոլորը շատ է անհանգստացնում եւրոպացիներին: Օտար պատերազմական նաւերը կենտրոնացած են Շանիայում, որին նոյնպէս վտանգ է սպառնում: Պատերազմական երեք նաւեր գնացին Վուչանգ: Ֆրանսիական դեսպան Լեմէր ճանապարհ ընկաւ Պեկին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 սեպտեմբերի: Նոր տարուց կը սկսի հրատարակվել «Вѣстникъ винодѣлія» առանց նախնական ցենզուրայի: Հրատարակիչ և խմբագիրը վաճառի Թայիրովն է:

ՄՕՍԿՎԱ, 12 սեպտեմբերի: Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գեորգիեւնա, հիւանդութեան ընթացքում երկրորդ անգամ ա. Հարդուրթիւնն ընդունելով երկրորդան 6 1/2 ժամին, ուժանայտ լինելուց յետոյ, այսօր, կէս գիշերվայ 3 ժամին, քահանայի աղօթքով ուղեկցված, հանգիստ կերպով ի Տէր հանգաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ Անգլիական 10-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ. 94 ր. 50 4. Բերլինի վրա 100 մարկ — 46 40 3. Փարիզի վրա 100 ֆրանկ — 37 15 3. Ռսկի — արծէ. 7 59 3.

Մաքսային կուպոններ	—	151	50
Արծաթ	—	1	14
Բորսային դիվիդենդներ	—	5	6
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի	—	102	75
—	—	102	38
—	—	2-րդ	—
—	—	3-րդ	—
—	—	4-րդ	—
—	—	5-րդ	—
—	—	6-րդ	—
6% ռուսկայ բնտա	—	155	50
4% ռուսկայ փոխառութիւն	—	—	—
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—	—
—	—	2-րդ	101
—	—	3-րդ	103
—	—	—	25
Ներքին 5% առաջին փոխառութ.	—	235	75
—	—	220	50
—	—	103	50
5 1/2% ընտա	—	—	—
4% Ներքին փոխառութիւն	—	95	87
4% գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի	—	101	—
Աղ. կալ. բանկի խաղարկութեան	—	—	—
գրաւ. թղթ.	—	210	—
5 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի.	—	106	50
4 1/2% գրաւական թղթեր կալուած.	—	—	—
փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ.	—	146	25
—	—	100	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	—	—	—
ընկերութեան օրդիգայաներ.	—	101	75
Մոսկվայի քաղաք. օրդիգայաներ.	—	101	—
Օդեսայի — — — — —	—	100	75
Թիֆլիսի — — — — —	—	—	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	—	—
—	—	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը	—	—	—
թղ. է:	—	—	—

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ

Բ. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, Նիկոլսկայա փողոցում:

- Սեփական քիմիական գործարան.
- Սեփական տեղատուն.
- Մեծ քանակութեամբ և հատով վաճառում.
- Ապրանքների յայտնի լաւ արժանաւորութիւն և թարմութիւն.
- Գների յայտնի չափաւորութիւն և պատուէրների կատարման ճշգրտութիւն:
- Հաշուող անձանց համար, որոնք սիրում են կոնֆօրտ և կարգ, իրանց բովանդակութեամբ հետաքրքիր պրէյս-կուրանտները ուղարկվում են ձերպագես:
- Օգտուէտ և ընդհանրապէս գործածվող մասնաւոր բազմաթիւ առարկաներ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՍԻԱՌՆԵՐՈՒՄ

Ապրանքների ուղարկելը զաւառականների պահանջմամբ կատարվում է պատւիրողների ցանկով ըստ վրադիր վճարով:

8. Պարտեանի «ՏԱՐԵՅՈՅ ԵՒ ԳՈՐԾԱԿՈՒԹԻՒՆԻ ԻԿԱՐԻ 1892 թ.» վաճառվում է Թիֆլիսի գրաւաճառանոցներում: Գինն է 10 կոպ. յօդուտ հանդ. հեղինակի կարգաւորման: Օտարաքաղաքացիք կարող են դիմել 12 կոպ. մարկա դրկելով Թիֆլիս, պ. Ա. Իսպիրեանցին, կամուրջի վրա:

Մի երիտասարդ ՀԱՅ ԿԻՆ, որը շատ լաւ գիտէ հայերէն, կը կամենար մանկ մի հայ ընտանիք, որպէս ՏՆՏԵՍՈՒՆԻ կամ ԲՕՆԵՆԱ:

Հարցնել հասցէի մասին «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

Առաջին աստիճանի վեց արծաթ մուգալի և տասն և չորս վկայականաց արժանացած՝ երեսնամեայ ուսուցչութեամբ փորձած դասատու մի յերթապ ուսնալ, մշտական կը փախադի դաս աւանդել այցելութեամբ և կամ իւր առնու դպրոցներէն, իտալերէն, թիւրքերէն և հայերէն լեզուի դիւրեմանք մեթօդով և ձեռնառու պայմանօք:

Ցանկացողը պարտին դիմել գրասենեակս:

Գ. կարգի ՈՒՍՈՒՑԻՉ պաշտօն է որոնում մեր դպրոցներում: Գիմել «Մշակ» լրագրի խմբագրութեան:

Երրորդ կարգի մի ՈՒՍՈՒՑԻՉ կամենում է տեղ ունենալ հայ դպրոցներում: Համաձայն է գնալու և ուրիշ թեմ: Հասցէն «Մշակ» խմբագրատանը:

ՀԱՇՈՒԵԿԸԻՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-Ն Սեպտեմբերի 1891

Պ Ա Հ Ա Ն Ա Ք	Թիֆլիսում	Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	238,453—60	133,379—69	371,833—29	1. Հիմնական դրամադրուս.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	413,781—68	111,000 —	524,781—68	2. Պահեստի դրամադրուս.....	191,665—21	—	191,665—21
3. Զեղջումն (Disconto) մուրակաց երկու ստորագրութեամբ.....	2,470,745—70	1,115,134—10	3,585,879—80	3. Դրամական աւանդներ	—	—	—
4. Զեղջ. մուր. մի ստորագր. ապահ. ապրանք.	—	—	—	ա) Պայմանաժամով.....	2,784,829 —	428,464 —	3,213,293 —
5. Զեղջումն տոկոսաբեր թղթ, կարծ. և այլն.	11,400—06	6,313—98	17,714—04	բ) Գ' Պահանջ.....	369,543 —	37,110 —	406,653 —
6. Փոխառութիւն գրաւականով:	—	—	—	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	898,331—13	744,062—54	1,642,393—67
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,142,568—09	443,527 —	1,586,095—09	դ) — պայմանաւոր.....	—	116,278—14	116,278—14
բ) — ոչ ապահ. — — — — —	267,683 —	11,510 —	279,193 —	4. Փոխառումն պետ. բանկային թիֆլ. բաժն.	—	—	—
գ) ապրանքների.....	—	68,409 —	68,409 —	ապահովված զեղջիւղ մուրակներով.....	—	—	—
դ) Ոսկուց և արծաթի.....	—	9,961—01	9,961 01	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի	—	—	—
7. Բանկի պատկանաւ տոկոսաբեր թղթեր.	359,114—37	57,367—45	416,482—28	Թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	—	—	—
8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.	53,958—14	548—93	54,507—07	6. Թղթակցներ	—	—	—
9. Թղթակցներ	—	—	—	ա) Նոցա հաշիւը (Loro).....	6,556,627—65	—	6,556,627—65
ա) Նոցա հաշիւը (Loro).....	6,534,415—19	—	6,534,415—19	բ) Բանկի հաշիւը (Nostro).....	5,952,631—87	—	5,952,631—87
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	5,824,293—24	—	5,824,293—24	7. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	—	699,290—71	699,290—71
10. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութեան հետ	698,331—32	—	698,331—32	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի. հետ.	64,904—26	—	64,904—26
կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնիների հետ.....	—	—	—	8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօններ	—	—	—
11. Բողոքուած մուրակներ.....	18,066—35	1,000 —	19,066—35	ա) 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 և 1889 թւերին.....	9,076—60	—	9,076—60
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ.....	17,256 —	19,975 —	37,231 —	9. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց.....	90,259—26	32,850—64	123,109—90
13. Ընթացիկ ծախսեր.....	36,324—52	19,691—48	56,015—95	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	148,503—84	82,966—06	231,469—90
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	2,761—94	3,314—50	6,076—44	11. Փոխանցիկ գումարներ.....	32,175—55	30,411—98	62,587—53
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	9,394—17	4,952—77	14,346—94	12. Արդիւնք 1890 թ.....	—	—	—
Ի. Ա.	18,098,547—37	2,171,434—07	20,269,981—44	Ի. Ա.	18,098,547—37	2,171,434—07	20,269,981—44

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենավների կանոնադրությունը և ուղղակի երթևեկությունը ՄԱՐՍԵԼԻՑ դեպի ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի և քուինշաբթի օրերը, 9/21 յուրեքսան օրը և փոխարինողը

Բաթուլից Մարսել, մանկուկ Տրապիզոն, Սամոս, և Կ. Պոլիս:
ԲԱՐՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՎՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ
Չորեքշաբթի, 11/23 սեպտեմբերի — ԱՆՍՈԼԻԱ — ԳԱՐԻԲ
— 25 սեպտ. (7 հոկտեմբերի) — ԱՐՄԵՆԻԱ — ՏԻՐԱՆ
— 9/21 հոկտեմբերի — ՍԻՐԿԱՍԻ — ԲՕՇԵԼ
— 23 հոկտեմբերի (4 նոյեմբերի) — ԱՆՍՈԼԻԱ — ԳԱՐԻԲ
և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կեսօրից յետոյ:
Ցամախների գնները ուղղակի երթևեկությունն Բաթուլից դեպի Պարիզ իսկական գնից պակասեցրած են:
Տեղեկությունների համար ճանապարհորդներին և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերության ագենտներին. ԲԱՐՈՒՄԻՑ պ. Գարանիսին, Նաբերեժնայա, ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ պ. Վերկուր ՎԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, Նախկին գնեղալ Տեր-Սասունցիի տանը, ԲԱՐՈՒՄԻՑ, Սամոսի Գիլյարովին, Կոլերիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՕՍԻՑ-ՍԿՈՒՄ պ. Լուի Բրեյերին:
2—12 (Կ. Շ.)

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որը Ներսիսյան դպրանոց աւարտած և տասներկու տարի դասատու է եղել հայոց ծխական և արքունի դպրոցներում և ունի իրաւունք 4-րդ դասակարգի, ցանկանում է դասեր ունենալ հայոց ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ:
Հասցեն. ТАГАНРОГЪ, Якову Теръ-Мартыросову.
Հեռագրի համար ТЕРМАТИРОСОВУ.
—33—

ՊԱՆԱԽՈՆ ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՀԻՆԳ ԳԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ
Նորին գերազանցության կողմանից ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի կարգադրությամբ յուրիս ամսի վերջից վերափոխվում է հինգ դասարանական ուսումնարանի պետական գիմնազիայի և բնական ուսումնարանի ծրագրով:
Պանսիոնում կաւանդվեն՝ կրթն, հայոց եկեղեցական պատմություն, մեկնություն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, յունարեն, վրացերեն, թուրքերեն լեզուներ, թուրքաբանություն, արաբերա, երկրագիտություն, ընդհանուր պատմություն, ռուսաց պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, Ռուսաստանի աշխարհագրություն, բնական պատմություն, նկարչություն, գրություն, խմբական երգեցողություն, երաժշտություն, պար, մարմնամարզություն:
Պանսիոնում պատրաստվողները կարող են մանկ գիմնազիայի, բնական ուսումնարանի, լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպես դժվարների, տեխնիկական և այլ միջակարգ ուսումնարաններում:
Աշակերտները ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթևեկներ: Ընդունվողները կը սկսվի օգոստոսի 20-ից:
Հասցեն. Тифлисъ, Солоаки, Вельяминовская улица, домъ № 11.
9—10 (Շ.)

ՎԱՐԴԱՆ ԼԻՍԻՅԱՆԻ
„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՇԱՆԱԳՐԵՐ“

Կանաչի համար, տետր № 2.
Վաճառվում է բոլոր գրականությունը: Օտարադաշտայինը դիմում են ուղղակի՝ Թիֆլիս, Բարդու Լիսիյան: Գումարով գնորդներին դիմում—25 օրինակի համար 10%, 50 օրինակի համար —20%: Դանապարհաճախը յորինողի վրա է:
5—8

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՆՈՒՆ ԶԱՆՑԱՆԻՑ
ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթություն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առարողները ստանում են ատենատետրեր:
Աւանդելի տարիքը սորա են՝ 1) Առևտրական հետևություններ, 2) Առևտրական թուղթերություններ, 3) Հաշուապահություն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթերությունների համարչի վրա, 5) Առևտրական թղթակցություններ, 6) Առևտրական և մանրածախ կանոնադրություններ և 7) գերազրություններ:
Ուսուցիչ սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունվողները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլջակով, Աղեքսանդր Փրիզոնովի տանը, № 9 Սերգեյեվայա և Նազարյան փողոցների անկյունում, զեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՆԱՊԷՍ կղը: Ծովանոցների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարադաշտայինը դիմում են կուրսերի հիմնողին.— ԵՒ Թիֆլիս, Ս. Ս. Մանուշյան:
19—25 (Ե. Շ.)

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВЕНСКИЙ МАГАЗИНЪ)
(ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ԱՌԱՋԻՆ ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊ, ՄԻՒՎԱՆԻՒՆ ՏԱՐԻ)
Ստացել ենք ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԻ մարդկանց և երեխաների աշխատ և ձմեռվայ ամենավերջին ձևի պատրաստի հագուստներ, պատրաստված մեր անմիջական հսկողությամբ: Մասկվում, սեփական արհեստանոցում:
Գները էժան են և ամենքին մատչելի:
Ինդրավերջանց. 4—15

ՆՈՐ ՀԻՐԱՆՈՑ НОВЫЕ НОМЕРА

„ԴԱՆԻԱ“ „ДАНІА“
ԹԻՖԼԻՍԻՍ
Բաղադրի կենտրոնում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահավորված սենեակներ. օրը 60 կոպեկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում:
Կերակուրները թարմ և համով:
ԵՒ ԹԻՖԼԻՍԻՍ
ԵՒ ԿԵՆՏՐԻ ԳՐՈԴԱ, ՆԱ ԳՈԼՈՎԻՆՍԿՈՄՔ ՍՊԵԿՏԻ. ԻՅԱԿՈՒ ԵՒ ԿԻՏՈ ՄԵԲԼԻՐՈՎԱՆՆԵ ՈՄԵՐԱ ՕՏԻ 60 ԿՈՓ. ԴՕ 5 ՐՍԲ. ԵՒ ՏՄԵԿԻ; ՈՄԵՅՅԱԿՈՒ ԲՕԼՅԱՅԱ ՍՏՄԿԱ.
ՔԻՇԱ ՏՎՅՅԱՅԱ ԵՒ ՎԵՍՅԱՅԱ.
10—36

Լճյա տեսաւ.
Պետերբուրգի հայ և վրացի ուսանողների հրատարակութեամբ
ԿԱՐ. ԵԱՂՈՒՐԵԱՆԻ
ՀԱՅՏԵՐԵՆ—ՈՒՈՒՍԵՐԵՆ
ԲԱՌԱՐԱՆԸ:
Գինը ճանապարհաճախով 2 ռ. է հրատարակութեան պահեստը գտնվում է ԴՎՐԵՅՈՎՅԱ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, պ. ՅՈՎՀ. ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ:
3—5

ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆ ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Ընդունվողներին և ընկույթին աշակերտների կը սկսվի օգոստոսի 26-ին, իսկ ուսուցիչը սեպտեմբերի 2-ին: Գանովսկայա և Տաօվայա լ.՝, ծոմ № 38.
5—5
Պատիւ ունեմ յայտնելու կովկասեան և Անդրկովկասեան պատուելի հասարակութեանը, որ եղբարը ԱԲԳԱՐԵԱՆՑՆԵՐՍ, կատարելով ԿՕՄԻՍԻԱԿԱՆ գործեր ՕԻԵՍԱՑՈՒՄ ընդունում ենք յանձնարարական պայմանով զանազան ապրանքներ վաճառելու: Նաև կատարում ենք՝ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատուէրներ: Պայմանների մասին դիմել. ՕԴԵՍՏԱ, Никиты Анкарову.
5—5

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
ТОВАРИЩЕСТВО
МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА
БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ
ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:
Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пашовъ. Конныхъ граблей «Голинсвортъ». Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди. Выпечение всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ. Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шутлѳортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ. Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятие на эллингъ судовъ для исправления или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.
Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального училища кв. № 8.
80—100 (Կ. Շ.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՐՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ Վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՅԵԼԻ ԶԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:
Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ԶԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար, 1%օ-ից մինչև 12%օ. Վաճառվում է եղբարց Ծովանոցների բանկային գրասենեակում և հեղինակի մոտ. Թիֆլիս, Նաղորայա լ.՝, № 9. Օտարադաշտայինը դիմում են վերջին հասցեով՝ Ս. Ս. Մանուշյան:
Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի:
10—150

2—10

2-3

ՍՈՒՏ ԶԳՆԱԽՈՐ

2-5

44—50 (5)

3—3